ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ու Մ

27 հուլիսի 2026 թվականի N 929-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԾՈՎԻՆԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-052-0366-0059, 05-052-0336-0028 ԵՎ 05-052-0368-0008 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 101-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Ծովինար բնակավայրի բնակիչներ Մեխակ Հայրապետի Ասոյանի, Սոֆիկ Վաղինակի Ասոյանի, Աննա և Աիդա Մեխակի Ասոյանների՝ իրենց սեփականության իրավունքով պատկանող հողամասերից (անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական №08052026-05-0070, տրված՝ 2004 թվականի հունիսի 30-ին, անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական №30042026-05-0066, տրված՝ 2004 թվականի հունիսի 30-ին և անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական №30042026-05-0088, տրված՝ 2004 թվականի հունիսի 30-ին) հրաժարվելու մասին դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Մեխակ Հայրապետի Ասոյանին (ծնված՝ 17.06.1960 թվականին) Սոֆիկ Վաղինակի Ասոյանին (ծնված՝ 10.09.1964 թվականին) Աննա Մեխակի Ասոյանին (ծնված՝ 02.01.1988 թվականին) և Աիդա Մեխակի Ասոյանին (ծնված՝ 27.07.1989 թվականին) սեփականության իրավունքով պատկանող 05-052-0366-0059 կադաստրային ծածկագրով 0,367 հա մակերեսով վարելահողը, 05-052-0336-0028 կադաստրային ծածկագրով 0,097 հա մակերեսով վարելահողը և 05-052-0368-0008 կադաստրային ծածկագրով 0,0992 հա մակերեսով վարելահողը ճանաչել համայնքային սեփականություն:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե սույն որոշումից ծագող իրավունքները պետական գրանցման ներկայացնելու համար:

3. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ հողամասերի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի վկայականները ստանալուց հետո համայնքի գույքագրման փաստաթղթերում առաջացող փոփոխությունները ներկայացնել համայնքի ավագանու հաստատմանը:
4. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին՝ հողամասերն ընդունել Մարտունի համայնքի հողային հաշվեկշիռ:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎՅԱՆ

2026թ. հուլիսի 27
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 հուլիսի 2026 թվականի N 930-Ա

## «ԱՂԱԲԵԿ ՇՈՒՔՈՒՐՅԱՆ ԴԵՐԵՆԻԿԻ» ԱՁ-ԻՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ 3-ՐԴ ԵՎ 4-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԾՎԱՆԻՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐ, ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 62 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՏՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Մարտունի համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 171-Ն որոշումը և «Աղաբեկ Շուքուրյան Դերենիկի» անհատ ձեռնարկատիրոջ հայտը (մուտք՝ 2026 թվականի հուլիսի 27-ի N-6058-Տ)՝ ***որոշում եմ.***

1. «Աղաբեկ Շուքուրյան Դերենիկի» ԱՁ-ին տալ ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Արծվանիստ բնակավայր, Կենտրոնական փողոց, թիվ 62 հասցեում գործող 40 քմ մակերեսով առևտրի կետում ոգելից խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքի թույլտվություն 2026 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակների համար (թույլտվությունը կցվում է):
2. «Աղաբեկ Շուքուրյան Դերենիկի» անհատ ձեռնարկատիրոջը՝ Մարտունու համայնքապետարանի 900145117066 հաշվի համարին վճարել 22000 (քսաներկու հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տեղական տուրք:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Հ. ՀՈՎՅԱՆ**

2026թ. հուլիսի 27
ք. Մարտունի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

# Ո Ր Ո Շ Ու Մ

27 հուլիսի 2026 թվականի N 931-Ա

## «ՄԽԻԹԱՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱԿՈԲԻ» ԱՁ-ԻՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ 3-ՐԴ ԵՎ 4-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԻՃՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ Ա-6 ԹԱՂԱՄԱՍԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 65 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՏՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Մարտունի համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 171-Ն որոշումը և «Մխիթար Հարությունյան Հակոբի» անհատ ձեռնարկատիրոջ հայտը (մուտք՝ 2026 թվականի հուլիսի 23-ի N-6022-Տ)՝ ***որոշում եմ.***

1. «Մխիթար Հարությունյան Հակոբի» ԱՁ-ին տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Լիճք բնակավայրի Ա-6 թաղամասի 1-ին փողոց, թիվ 65 հասցեում գործող 47 քմ մակերեսով առևտրի կետում ոգելից խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքի թույլտվություն 2026 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակների համար (թույլտվությունը կցվում է):
2. «Մխիթար Հարությունյան Հակոբի» անհատ ձեռնարկատիրոջը՝ Մարտունու համայնքապետարանի 900145107067 հաշվի համարին վճարել 22000 (քսաներկու հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տեղական տուրք:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2026թ. հուլիսի 27
ք. Մարտունի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 հուլիսի 2026 թվականի N 932-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 8-Ի №852-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով Մարտունու համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նախագահի տեղակալի 2026 թվականի հուլիսի 23-ի զեկուցագիրը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ղեկավարի 2026 թվականի հուլիսի 8-ի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի ղեկավարի 2026 թվականի հունիսի 25-ի N 791-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» №852-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.
   1) որոշման 1-ին կետի 5-րդ ենթակետի «նույն հասցեի գույքի մյուս» բառերը փոխել «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Լիճք բնակավայրի Ա-6 թաղամասի 2-րդ փողոց, թիվ 8 հասցեի գույքի» բառերով և թվերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2026թ. հուլիսի 27
ք. Մարտունի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 հուլիսի 2026 թվականի N 933-Ա

## ԱՌԱՆՑ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԿԱՄՈՅԻ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 6 Բ ՀԱՍՑԵԻ 25,2 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 02.02.2002 թվականի «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի մասի գործառնական նշանակությունը փոփոխելու կարգը հաստատելու մասին» թիվ 88-Ն որոշման պահանջով և հիմք ընդունելով Գոհար Նալբանդյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի Կամոյի փողոց, թիվ 6 Բ հասցեի՝ Գոհար Նալբանդյանին (ծնված՝ 30.07.1960 թվականին) սեփականության իրավունքով պատկանող 25,2 քմ մակերեսով ավտոտնակի գործառնական նշանակությունը՝ ավտոտնակից փոխել արագ սննդի կետի առանց նախագծային փոփոխությունների:
2. Գոհար Նալբանդյանին՝ վճարել տեղական տուրք 15 000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ: Գոհար Նալբանդյանին՝ դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե կատարելու իրավունքների պետական գրանցում:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎՅԱՆ**

2026թ. հուլիսի 27
ք. Մարտունի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հուլիսի 2026 թվականի №934-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԾՈՎԻՆԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 5-ՐԴ ԹԱՂԱՄԱՍԻ 16-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 24 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-052-0113-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, 16.12.2021 թվականի ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ և 3.1 մասերի պահանջներով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» №912-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի №1023-Ն որոշումը, Մարտունի համայնքի ավագանու 2026 թվականի մայիսի 27-ի №94-Ա որոշումը, նկատի ունենալով, որ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև հիմք ընդունելով Կարեն Քաջիկի Հարությունյանի 14.05.2026 թվականի №4048-Ք դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծովինար բնակավայրի 5-րդ թաղամասի 16-րդ փողոց, թիվ 24 հասցեում գտնվող, Կարեն Քաջիկի Հարությունյանին (ծնված՝ 01.04.1991 թվականին)

սեփականության իրավունքով պատկանող 05-052-0113-0002 կադաստրային ծածկագրով 0.12082 հա մակերեսով փաստացի օգտագործվող բնակելի կառուցապատման հողամասի վրա ինքնակամ կառուցված 60.24 քմ արտաքին մակերեսով բնակելի տան նկուղային հարկը (ներքին մակերեսը՝ 39.3 քմ, կառուցված՝ 2016 թվականին), 8.0 քմ մակերեսով բնակելի տան նկուղային հարկի բաց պատշգամբը կամ աստիճանահարթակը (կառուցված՝ 2016 թվականին), 148.56 քմ արտաքին մակերեսով բնակելի տան 1-ին հարկը (ներքին մակերեսը՝ 114.8 քմ, կառուցված՝ 2016 թվականին), 12.7 քմ մակերեսով բնակելի տան 1-ին հարկի բաց պատշգամբը կամ աստիճանահարթակը (կառուցված՝ 2016 թվականին), 40.2 քմ արտաքին մակերեսով ավտոտնակի նկուղային հարկը (ներքին մակերեսը՝ 28.8 քմ, կառուցված՝ 2017 թվականին), 3.2 քմ մակերեսով ավտոտնակի նկուղային հարկի բաց պատշգամբը կամ աստիճանահարթակը (կառուցված՝ 2017 թվականին), 109.81 քմ արտաքին մակերեսով ավտոտնակի 1-ին հարկը (ներքին մակերեսը՝ 56.6+30.6=87.2 քմ, կառուցված՝ 2017 թվականին), 3.6 քմ մակերեսով ավտոտնակի 1-ին հարկի բաց պատշգամբը կամ աստիճանահարթակը (կառուցված՝ 2017 թվականին) և 2.15 քմ արտաքին մակերեսով զուգարանը (ներքին մակերեսը՝ 1.6 քմ, կառուցված՝ 2017 թվականին) ճանաչել օրինական:

2. Ինքնակամ կառույցների օրինականացման վճարը կազմում է՝

   բնակելի տան նկուղային հարկի համար՝ 60.24x10000x0.0874=52650 (հիսուներկու հազար վեց հարյուր հիսուն) ՀՀ դրամ.

   բնակելի տան նկուղային հարկի բաց պատշգամբի կամ աստիճանահարթակի համար՝ 8.0x10000x0.0874=6992 (վեց հազար ինը հարյուր իննսուներկու) ՀՀ դրամ.

   բնակելի տան 1-ին հարկի համար՝ 148.56x10000x0.0874=129841 (հարյուր քսանինը հազար ութ հարյուր քառասունմեկ) ՀՀ դրամ.

   բնակելի տան 1-ին հարկի բաց պատշգամբի կամ աստիճանահարթակի համար՝ 12.7x10000x0.0874=11100 (տասնմեկ հազար հարյուր) ՀՀ դրամ.

   ավտոտնակի նկուղային հարկի համար՝ 40.2x6000x0.0874=21081 (քսանմեկ հազար ութսունմեկ) ՀՀ դրամ.

   ավտոտնակի նկուղային հարկի բաց պատշգամբի կամ աստիճանահարթակի համար՝ 3.2x6000x0.0874=1678 (հազար վեց հարյուր յոթանասունութ) ՀՀ դրամ.

   ավտոտնակի 1-ին հարկի համար՝ 109.81x6000x0.0874=57584 (հիսունյոթ հազար հինգ հարյուր ութսունչորս) ՀՀ դրամ.

   ավտոտնակի 1-ին բաց պատշգամբի կամ աստիճանահարթակի հարկի համար՝ 3.6x6000x0.0874=1888 (հազար ութ հարյուր ութսունութ) ՀՀ դրամ.

   զուգարանի համար՝ 2.15x6000x0.0874=1128 (հազար հարյուր քսանութ) ՀՀ դրամ.

   ընդամենը՝ 283942 (երկու հարյուր ութսուներեք հազար ինը հարյուր քառասուներկու) ՀՀ դրամ:

3. Օրինականացման համար հիմք ընդունել լիցենզավորված չափագրողի կողմից ներկայացված հատակագիծը:

4. Առկա է Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման

տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիրն է՝ 202394LSDP) և անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N28082023-05-0026 վկայականը:

5. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
6. Անշարժ գույքերին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Ծովինար բնակավայր, 5-րդ թաղամաս, 16-րդ փողոց, թիվ 24 հասցեն:
7. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎԵՅԱՆ

2026թ. հուլիսի 28
ք. Մարտունի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հուլիսի 2026 թվականի N 935-Ա

## «ԲԻԹԻԷԼ ՍԵՐՎԻՍԻՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍ ԱՄՍՎԱ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 42 ՀԱՍՑԵԻՆ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԿԻ Ա ԿՈՂՄՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Մարտունի համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 171-Ն որոշումը և «Բիթիէլ Սերվիսիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայտը (մուտք՝ 2026 թվականի հուլիսի 28-ի N 608393-Տ)՝ ***որոշում եմ.***

1. «Բիթիէլ Սերվիսիս» ՍՊԸ-ին տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի Մյասնիկյան փողոց, թիվ 42 հասցեին հարակից տարածքում գտնվող գովազդային վահանակի Ա կողմում 18 քմ մակերեսով սոցիալական արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն 2026 թվականի օգոստոս ամսվա համար:
2. Սոցիալական գովազդի համար տեղական տուրք սահմանել 0 դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎՅԱՆ**

2026թ. հուլիսի 29
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հուլիսի 2026 թվականի N 936-Ա

## «ՇՈՒՇԱՆ ԱՎԱԳՅԱՆ ՍԱՄՎԵԼԻ» ԱՁ-ԻՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ 3-ՐԴ ԵՎ 4-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ, ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔ, ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 17 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՏՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Մարտունի համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 171-Ն որոշումը և «Շուշան Ավագյան Սամվելի» անհատ ձեռնարկատիրոջ հայտը (մուտք՝ 2026 թվականի հուլիսի 28-ի N-6081-Տ)՝ ***որոշում եմ.***

1. «Շուշան Ավագյան Սամվելի» ԱՁ-ին տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Մարտունի քաղաք, Մյասնիկյան փողոց, թիվ 17 հասցեում գործող 180 քմ մակերեսով առևտրի կետում ոգելից խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքի թույլտվություն 2026 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակների համար (թույլտվությունը կցվում է):
2. «Շուշան Ավագյան Սամվելի» անհատ ձեռնարկատիրոջը՝ Մարտունու համայնքապետարանի 900145101060 հաշվի համարին վճարել 42000 (քառասուներկու հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տեղական տուրք:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՀՈՎՅԱՆ

2026թ. հուլիսի 29
ք. Մարտունի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հուլիսի 2026 թվականի N 937-Ա

## ԹԱԳՈՒՀԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 158-րդ հոդվածի 3-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով վարչական իրավախախտման վերաբերյալ 21.07.2026 թվականի թիվ 9 արձանագրությունը, Մարտունու համայնքապետարանի վարչական իրավախախտումների հարցերով հանձնաժողովի 28.07.2026 թվականի թիվ 18 արձանագրությունը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված, Մարտունու համայնքապետարանում իրականացված վարչական վարույթի ընթացքում բացահայտված գործի բոլոր հանգամանքները, հաստատված համարելով Թագուհի Խաչատրյանի կողմից Մարտունի համայնք, Ծակքար բնակավայր, 3-րդ փողոց, թիվ 38 հասցեում գործող «Թագուհի Խաչատրյան» ԱՁ-ին պատկանող առևտրի կետում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայության օբյեկտներում և առևտրի իրականացման վայրերում օրենսդրությամբ սահմանված պահանջներին բավարարող ցուցանակով չապահովելու փաստը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնք, Ծակքար բնակավայր, 3-րդ փողոց, թիվ 38 հասցեում գործող «Թագուհի Խաչատրյան» ԱՁ-ին պատկանող առևտրի կետում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայության օբյեկտներում և առևտրի իրականացման վայրերում օրենսդրությամբ սահմանված պահանջներին բավարարող ցուցանակով չապահովելու համար «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 158-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքով Թագուհի Խաչատրյանի նկատմամբ նշանակել վարչական տուգանք 20000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:

2. Թագուհի Խաչատրյանին 20000 (քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տուգանքը 15-օրյա ժամկետում վճարել Մարտունու համայնքապետարանի 900145106093 հաշվի համարին:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետի վրա:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Թագուհի Խաչատրյանին որոշման ընդունման մասին իրազեկմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. ՀՈՎՅԵՅԱՆ**

2026թ. հուլիսի 29
ք. Մարտունի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հուլիսի 2026 թվականի N 938-Ա

### ԱԼՎԱՐԴ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 158-րդ հոդվածի 9-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով վարչական իրավախախտման վերաբերյալ 23.07.2026 թվականի թիվ 10 արձանագրությունը, Մարտունու համայնքապետարանի վարչական իրավախախտումների հարցերով հանձնաժողովի 28.07.2026 թվականի թիվ 19 արձանագրությունը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված, Մարտունու համայնքապետարանում իրականացված վարչական վարույթի ընթացքում բացահայտված գործի բոլոր հանգամանքները, հաստատված համարելով Ալվարդ Բաղդասարյանի կողմից Մարտունի համայնք, Ներքին Գետաշեն բնակավայր, Վանքի թաղամաս, 5-րդ փողոց, թիվ 19 հասցեում գործող «Ալվարդ Բաղդասարյան» ԱՁ-ին պատկանող առևտրի կետում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայության օբյեկտներում և առևտրի իրականացման վայրերում օրենսդրությամբ սահմանված պահանջներին բավարարող աշխատողների աշխատանքային արտահագուստի կրումը չապահովելու փաստը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնք, Ներքին Գետաշեն բնակավայր, Վանքի թաղամաս, 5-րդ փողոց, թիվ 19 հասցեում գործող «Ալվարդ Բաղդասարյան» ԱՁ-ին պատկանող առևտրի կետում առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայության օբյեկտներում և առևտրի իրականացման վայրերում օրենսդրությամբ սահմանված պահանջներին բավարարող աշխատողների աշխատանքային արտահագուստի կրումը չապահովելու համար «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 158-րդ հոդվածի 9-րդ մասի հիմքով

Ալվարդ Բաղդասարյանի նկատմամբ նշանակել վարչական տուգանք 10000 (տասը հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:

2. Ալվարդ Բաղդասարյանին 10000 (տասը հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տուգանքը 15-օրյա ժամկետում վճարել Մարտունու համայնքապետարանի 900145109055 հաշվի համարին:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետի վրա:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ալվարդ Բաղդասարյանին որոշման ընդունման մասին իրազեկմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎԵՅԱՆ

2026թ. հուլիսի 29

ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հուլիսի 2026 թվականի N 939-Ա

## «ՂՈՒԿԱՍՅԱՆ ՆԱՐԻՆԵ ՄԱՆՎԵԼԻ» ԱՁ-ԻՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ 3-ՐԴ ԵՎ 4-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ, ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ՁՈՐԱԳՅՈՒՂ ԲՆԱԿԱՎԱՅՐ, 12-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 136 ՀԱՍՑԵԻ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՏՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Մարտունի համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 171-Ն որոշումը և «Ղուկասյան Նարինե Մանվելի» անհատ ձեռնարկատիրոջ հայտը (մուտք՝ 2026 թվականի հուլիսի 28-ի N-6101-Տ)՝ ***որոշում եմ.***

1. «Ղուկասյան Նարինե Մանվելի» ԱՁ-ին տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Ձորագյուղ բնակավայր, 12-րդ փողոց, թիվ 136 հասցեում գործող 25 քմ մակերեսով առևտրի կետում ոգելից խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքի թույլտվություն 2026 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակների համար (թույլտվությունը կցվում է):
2. «Ղուկասյան Նարինե Մանվելի» անհատ ձեռնարկատիրոջը՝ Մարտունու համայնքապետարանի 900145104064 հաշվի համարին վճարել 12000 (տասներկու հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տեղական տուրք:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2026թ. հուլիսի 29
ք. Մարտունի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հուլիսի 2026 թվականի N 940-Ա

## ԳԱՐԻԿ ՎԼԱԴԻՄԻՐԻ ՆԱՀԱՊԵՏՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 158-րդ հոդվածի 9-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով վարչական իրավախախտման վերաբերյալ 23.07.2026 թվականի թիվ 11 արձանագրությունը, Մարտունու համայնքապետարանի վարչական իրավախախտումների հարցերով հանձնաժողովի 28.07.2026 թվականի թիվ 20 արձանագրությունը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով հարուցված, Մարտունու համայնքապետարանում իրականացված վարչական վարույթի ընթացքում բացահայտված գործի բոլոր հանգամանքները, հաստատված համարելով Գարիկ Վլադիմիրի Նահապետյանի կողմից Մարտունի համայնք, Ներքին Գետաշեն բնակավայր, Գետափնյա թաղամաս, 1-ին փողոց, 1-ին նրբանցք, թիվ 7 հասցեում գործող «Գարիկ Նահապետյան» ԱՁ-ին պատկանող առևտրի կետում վաճառողի կողմից սննդամթերքի վաճառքով զբաղվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների աշխատողներին աշխատանքային արտահագուստի կրումը չապահովելու փաստը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնք, Ներքին Գետաշեն բնակավայր, Գետափնյա թաղամաս, 1-ին փողոց, 1-ին նրբանցք, թիվ 7 հասցեում գործող «Գարիկ Նահապետյան» ԱՁ-ին պատկանող առևտրի կետում վաճառողի կողմից սննդամթերքի վաճառքով զբաղվող առևտրի և հանրային սննդի օբյեկտների աշխատողներին աշխատանքային արտահագուստի կրումը չապահովելու համար «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 158-րդ հոդվածի 9-րդ մասի հիմքով Գարիկ Վլադիմիրի Նահապետյանի նկատմամբ նշանակել վարչական տուգանք 10000 (տաս հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով:

2. Գարիկ Վլադիմիրի Նահապետյանին՝ 10000 (տաս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տուգանքը 15-օրյա ժամկետում վճարել Մարտունու համայնքապետարանի 900145109055 հաշվի համարին:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի վրա:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գարիկ Վլադիմիրի Նահապետյանին որոշման ընդունման մասին իրազեկմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎԵՅԱՆ

2026թ. հուլիսի 29
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հուլիսի 2026 թվականի N 941-Ա

## «ԱՀԱՐՈՆ ՍԻՐԱԿԱՆՅԱՆ ՎԱՉԱԳԱՆԻ» ԱՁ-ԻՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ 3-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԾՎԱՆԻՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 10-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՏՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Մարտունի համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 171-Ն որոշումը և «Ահարոն Սիրականյան Վաչագանի» անհատ ձեռնարկատիրոջ հայտը (մուտք՝ 2026 թվականի հուլիսի 28-ի N-6104-Տ)՝ ***որոշում եմ.***

1. «Ահարոն Սիրականյան Վաչագանի» ԱՁ-ին տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Արծվանիստ բնակավայրի 10-րդ փողոց, թիվ 3 հասցեում գործող 48 քմ մակերեսով առևտրի կետում ոգելից խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքի թույլտվություն 2026 թվականի 3-րդ եռամսյակի համար (թույլտվությունը կցվում է):
2. «Ահարոն Սիրականյան Վաչագանի» անհատ ձեռնարկատիրոջը՝ Մարտունու համայնքապետարանի 900145117066 հաշվի համարին վճարել 11000 (տասնմեկ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տեղական տուրք:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2026թ. հուլիսի 29
ք. Մարտունի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հուլիսի 2026 թվականի N 942-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ, ՎԱՆՔԻ ԹԱՂԱՄԱՍԻ 5-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 9 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-066-0134-0006 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման հավելվածի 29-րդ կետի 4-րդ ենթակետի և 62-րդ կետի պահանջները՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Ներքին Գետաշեն բնակավայր, Վանքի թաղամասի 5-րդ փողոց, թիվ 9 հասցեում գտնվող 05-066-0134-0006 կադաստրային ծածկագրով գույքը վերահասցեավորել և տրամադրել նոր հասցե՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Ներքին Գետաշեն բնակավայր, Վանքի թաղամասի 5-րդ փողոց, թիվ 4/1 հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎԵՅԱՆ**

2026թ. հուլիսի 29
ք. Մարտունի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հուլիսի 2026 թվականի №943-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՂԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 12-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 24 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-082-0015-0001 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, 16.12.2021 թվականի ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ և 3.1 մասերի պահանջներով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» №912-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի №1023-Ն որոշումը, նկատի ունենալով, որ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև հիմք ընդունելով Հուսիկ Մանուկի Գրիգորյանի 21.07.2026 թվականի №5932-Ք դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վաղաշեն բնակավայրի 12-րդ փողոց, թիվ 24 հասցեում գտնվող, Հուսիկ Մանուկի Գրիգորյանին (ծնված՝ 12.04.1959 թվականին) սեփականության իրավունքով պատկանող 05-082-0015-0001 կադաստրային ծածկագրով 0.237

հա մակերեսով փաստացի օգտագործվող բնակելի կառուցապատման հողամասի վրա ինքնակամ կառուցված 50.0 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը (ներքին մակերեսը՝ 37.27 քմ, կառուցված՝ 2020 թվականին) և 3.74 մակերեսով պարիսպը (կառուցված՝ 2020 թվականին) ճանաչել օրինական:

2. Ինքնակամ կառույցների օրինականացման վճարը կազմում է՝

ավտոտնակի համար՝ 50.0x6000x0.1028=30840 (երեսուն հազար ութ հարյուր քառասուն) ՀՀ դրամ.

պարիսպի համար՝ 3.74x6000x0.1028=2307 (երկու հազար երեք հարյուր յոթ) ՀՀ դրամ.

ընդամենը՝ 33147 (երեսուներեք հազար հարյուր քառասունյոթ) ՀՀ դրամ:

3. Օրինականացման համար հիմք ընդունել լիցենզավորված չափագրողի կողմից ներկայացված հատակագիծը:
4. Առկա է Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիրն է՝ 20267UL86H):
5. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
6. Անշարժ գույքերին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Վաղաշեն բնակավայր, 12-րդ փողոց, թիվ 24 հասցեն:
7. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎԵՅԱՆ

2026թ. հուլիսի 29
ք. Մարտունի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հուլիսի 2026 թվականի N 944-Ա

